

*ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*  
*ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ*



**ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ**



Հաստատված է

ՄԽՀ գիտական խորհրդի

\_\_\_\_\_ նիստում

ՄԽՀ գիտական խորհրդի

նախագահ՝ Ա. Աղաբաբյան

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի կանոնադրությունը սահմանում է Մովսես Խորենացու անվան համալսարանի (այսուհետ՝ ՄԽՀ) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:
2. Յուրաքանչյուր ֆակուլտետ սույն օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է ՄԽՀ գիտական խորհրդում:
3. Սույն կանոնադրությունը հաստատվում է ՄԽՀ գիտական խորհրդում:
4. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:
5. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում, կամ լուծարվում է ՄԽՀ գիտական խորհրդի որոշմամբ:
6. Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:
7. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝  
հայերեն՝ \_\_\_\_\_  
ռուսերեն՝ \_\_\_\_\_  
անգլերեն՝ \_\_\_\_\_
8. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ \_\_\_\_\_
9. Ֆակուլտետը ՄԽՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:
10. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՄԽՀ կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ՄԽՀ կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Ֆակուլտետը ՄԽՅ գիտակրթական գործունեությունն իրականացնող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

12. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՄԽՅ կանոնադրությանը, ՄԽՅ ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

13. Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող կրթական, գիտական, ուսումնա-օժանդակ և տեխնիկական աշխատանքների բնույթից, ըստ սահմանված չափանիշների մշակում է իր հաստիքացուցակը, որը հաստատվում է ռեկտորի կողմից:

## III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ՄԽՅ կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

15. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը, գիտական խորհուրդը և դեկանը, որոնք իրենց իրավասության սահմաններում ընդունում են ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՄԽՅ կանոնադրությանը, ՄԽՅ ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

16. Ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե անդամների թիվը չի կարող գերազանցել խորհրդի կազմի 50 տոկոսը: Խորհրդի անդամների թիվն ամրագրվում է ֆակուլտետի կանոնադրության մեջ:

17. Խորհրդի ի պաշտոնե անդամներն են դեկանը և ամբիոնների վարիչները: Խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի:

18. Խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

19. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:

20. Խորհուրդն օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը և փոփոխություններ ու լրացումներ է կատարում դրանում, ընտրում և պաշտոնանկ է անում դեկանին, լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը:

21. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, իսկ ամենամյա նիստերը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո՝ ըստ ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի:

22. Խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը:

Դեկանի ընտրության և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է խորհրդի կողմից ընտրված նախագահողը: Դեկանը չի կարող լինել այդ նիստերի նախագահողը:

Դեկանի պաշտոնակության հարցը քննարկելու նպատակով հրավիրվող նիստը վարում է ռեկտորը:

Խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

23. Խորհրդի քարտուղարն ի պաշտոնե ֆակուլտետի գործավարն է:

24. Դեկանի կողմից նիստը հրավիրելու անհնարինության դեպքում խորհրդի նիստը հրավիրվում է դեկանի պաշտոնակատարի կամ ռեկտորի կողմից:

25. Խորհրդի նիստն իրավագոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:

Խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ, գաղտնի է:

26. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորը:

27. Խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում խորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է խորհրդի նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

Դեկանին անվստահություն հայտնելու խորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:

28. Դեկանին պաշտոնակ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

29. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ՄԽՅ ինտերնետային կայքում:

30. Դեկանն ընտրվում է ֆակուլտետի խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

Դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Առանձնակի դեպքերում հիմնադիրների որոշմամբ կարող է ընտրվել նաև գիտական աստիճան ունեցող դասախոսը:

31. Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում խորհրդում մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն:

32. Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ընտրությունների արդյունքների հիման վրա:

33. Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:

34. Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, միջազգային և այլ ոլորտներում,

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,

3) ռեկտորի հաստատման է ներկայացնում դեկանի տեղակալների թեկնածուներին,

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,

7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին,

9) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

35. Դեկանն տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
36. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի լուծման համար ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ դեկանատ, որի կազմի մեջ մտնում են դեկանը, նրա տեղակալները, ամբիոնների վարիչները և ուսանողական խորհրդի նախագահը:
37. Դեկանատը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով:

#### IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

38. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել նաև լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:
39. Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:
40. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:
41. Ամբիոնները գործում են ՄԽՅ կանոնադրության, ՄԽՅ իրավական ակտերի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:
42. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, համալսարանի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:
43. Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով, որից հետո ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:
- Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:
44. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է խորհուրդը:
45. Ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը:
- Փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում խորհուրդը միջնորդում է ՄԽՅ գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:
46. ՄԽՅ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
- ՄԽՅ գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատվելիս հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի խորհրդի նոր նիստ: Ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը վերահաստատելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
47. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկած են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը:
48. Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:
49. ՄԽՅ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն

իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

50. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

51. Ամբիոնի կրթական և գիտական հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:

Ամբիոնի նիստերը իրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:

Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու գործավարի կողմից:

52. Ֆակուլտետի կենտրոնները և լաբորատորիաները ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնց ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև իրավասությունը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

53. Կենտրոնի կամ լաբորատորիայի գործունեության հիմնական հարցերը քննարկվում են կենտրոնի կամ լաբորատորիայի համակազմի նիստերում: Կենտրոնի կամ լաբորատորիայի ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

54. Կենտրոնների և լաբորատորիաների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ՄԽՀ գիտական խորհուրդը՝ ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբ:

55. Ֆակուլտետի կանոնադրության հավելվածի տեսքով ներկայացվում են տվյալ ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները: